



N___

Էջմիածնի շրջան
Գյուղ Արաքս
Հեռ.՝ 077/ 09-08-07
077/11-04-03

< ___ > ___ 2012թ.

**ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի (Էջմիածնի տարածաշրջան) գյուղապետարանը (այսուհետ
գյուղապետարան) հայտարարում է մրցույթ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային
ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

1. Արաքսի (Էջմիածնի տարածաշրջան) համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
(ծածկագիր 3.1-3)

Առաջատար մասնագետն աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով կատարում է
համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, մասնակցում է դրանց
շինարարության և վերանորոգման աշխատանքներին, համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի
հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Միջնակարգ կրթություն

- Սույն պաշտոնի անձնագրի 11-րդ կետի «ը» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական
ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012թ. մայիսի 16-ին, ժամը
15⁰⁰-ին Արաքսի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ
փաստաթղթերը.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս):

- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների
տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի
պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ.-ի մարտի 3-ի N 310 որոշմամբ
հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ
գործունակ.

- Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային, տեղամասային
կցագրման վկայականի պատճենները:

- Մեկ լուսանկար 3x4 չափսի:

- Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև
պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի
(Էջմիածնի տարածաշրջան) գյուղապետարան և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ
վարչության (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71), հեռ. (0237) 6-07-70, (0237) 6-76-49:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10-ից 16-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման
վերջին ժամկետն է 2012թ. մայիսի 1-ը:

**Արաքս համայնքի
ղեկավար՝ /**

/ Ա. Միքաելյան